ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/39 ծածկագրով արխիվային ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.08.2021թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Գյուլնարա Հովհաննիսյան /գնահատող/

Սոնա Սարգսյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
2	«Մատենագիր» ՍՊԸ
3	Հրանուշ Նալբանդյան Աշիկի Ա/Ձ
4	Ա/Ձ Կորյուն Ժամհարյան Սոսիկի

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները

		«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ		«Մատենագիր» ՍՊԸ		Հրանուշ Նալբանդյան Աշիկի Ա/Ձ		Ա/Ձ Կորյուն Ժամհարյան Սոսիկի	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	6415000	2800000	3360000	2999999	2999999	3120000	3120000	3446000	3446000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի ղեկավարի անուն ազգանունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021թ օգոստոսի 20-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.08.2021թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Գյուլնարա Հովհաննիսյան

Սոնա Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8.Գնահատման արդյունքների մասին

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արա Խաչատրյան /նախագահ/

_____ Գյուլնարա Հովհաննիսյան

_____ Սոնա Սարգսյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/